

## **Արագածոտնի մարզպետը մասնակցեց Նահապետ Ասատրյանի հոգեհանգստի արարողությանը**

Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի Քարվաճառի պաշտպանական ուղղությամբ հակառակորդի ձեռնարկած դիվերսիոն հետախուզական ներթափանցման փորձի ժամանակ զոհված հայ զինծառայող 33-ամյա Նահապետ Ասատրյանն Արագածոտնի մարզի Լուսազյուղ համայնքից է:

Հունվարի 22-ին մարզպետ Սարգիս Սահակյանն այցելեց Լուսազյուղ եւ մասնակցեց Նահապետ Ասատրյանի հոգեհանգստի արարողությանը: Նա իր զորակցությունը հայտնեց զոհվածի ընտանիքին, հարազատներին, համազյուղացիներին: Մարզպետի կողմից ընտանիքին տրամադրվեց դրամական աջակցություն:

Նահապետ Ասատրյանի հուղարկավորությունը հունվարի 23-ին է, Լուսազյուղի գերեզմանատանը:

«Արագածոտնի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին»